1917 ԹՎԱԿԱՆԻ ՌՈՒՍԱԿԱՆ ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԸ*

Պողոսյան Սամվել, Ղռմաջյան Հասմիկ

Բանալի բառեր՝ Հայկական հարց, Փետրվարյան հեղափոխություն, Հոկտեմբերյան հեղափոխություն, Հայաստանի անկախություն:

Առաջին համաշխարհային պատերազմի ընթացքը լի էր հայ ժողովրդի համար ճակատագրական իրադարձություններով: Հայությունն ուներ իր սպասելիքները և քաղաքական նպատակները այդ պատերազմից, գլխավորապես՝ Հայկական հարցի արդարացի լուծում Անտանտի հաղթանակի դեպքում: Դրանով էր պայմանավորված, որ պատերազմը սկսվելուն պես հայերը իրենց ակտիվ մասնակցությունը բերեցին՝ ստեղծելով կամավորական գնդեր, որոնք մարտնչում էին ռուսական բանակի կողքին, իսկ 1916 թ. Ֆրանսիայի հովանու ներքո Կիպրոսում կազմավորեցին Հայկական լեգեոնը:

Ռուսական զորքի կողմից Արևմտյան Հայաստանի զգալի մասի ազատագրումը ոգևորության մեծ ալիք էր բարձրացրել հայության շրջանում: Ռուսաստանում իշխող ցարական վարչակարգը պատերազմի սկզբում սին հույսեր էր տալիս հայերին, փորձում էր օգտագործել հայկական ռազմական ուժը, սակայն Արևմտյան Հայաստանի զգալի մասը գինագրավելուց հետո հրաժարվում է շնորհել ինքնավարություն: Ցարիզմի քաղաքականությունը խոր հիասթափություն է առաջացնում հայերի մոտ:

Իրավիճակը փոխվեց 1917 թ. փետրվարի 27-ին, երբ Պետրոգրադում տեղի է ունենում հեղափոխություն, տապալվում է միապետությունը և ձևավորվում է ժամանակավոր կառավարությունը: Վերջինս հանդես եկավ ժողովրդավարական բարեփոխումներ կատարելու, ճնշված ազգերին ազատագրելու, ժողովուրդների ինքնորոշման վերաբերյալ հայտարարություններով[1]: Ռուսաստանի ժամանակավոր կառավարության ազգային քաղաքականությունը բավական ոգևորող էր: Այն ճանաչում է Լեհաստանի անկախությունը, Ֆինլանդիայի և Ուկրաինայի ինքնավարությունը [2]: Բնականաբար, այդ ամենը հայ քաղաքական մտքի գիտակցության մեջ հետզհետե սկսում էր սերմանել Արևմտյան Հայաստանի համար լայն ինքնավարություն կամ նույնիսկ անկախություն ձեռք բերելու գաղափարը:

Հայ հասարակական-քաղաքական միտքը, քիչ թե շատ բարվոք համարելով արևելահայության դրությունը, այս փուլում ևս ուշադրությունը սևեռում է արևմտահայության խնդրի լուծմանը: Հասարակական-քաղաքական ու մշակութային ճանաչված գործիչ Ալեքսեյ Ջիվելեգյանը գրում էր. «Հայ ժողովուրդը փետրվարյան հեղափոխությունից հետո ունի նաև հատուկ պահանջներ, որոնք բխում են նրա ազգային-քաղաքական մասնատվածության փաստից: Թուրքահայաստանը պետք է լինի ազատ և ստանա քաղաքական ինքնորոշման իրավունք» [3]:

Դաշնակցականները գտնում էին, որ սոցիալիստական մտածողությունը և դասակարգային պայքարը ռուսահայ մտավորականությանը չպետք է մտահոգի, որովհետև հայ ժողովրդի համար հիմնական խնդիրը կա ու կմնա Թուրքահայաստանի ազատագրումը [4]: Հայկական հարցի լուծման համար նրանք առաջադրում էին հետևյալ կարգախոսը. «Ոչ Հայաստան առանց հայերի և ոչ հայեր առանց Հայաստանի, այլ ազատ հայ ժողովուրդ ազատ Հայաստանում» [5]:

Դաշնակցական գործիչ Կարո Սասունին նշում է, որ հեղափոխությունը հայ ժողո-

---

* Հոդվածն ընդունվել է 29.04.21:
Հոդվածը տպագրության է երաշխավորել Խ. Աբովյանի անվան ՀՊՄՀ Հայոց պատմության ամբիոնը: 05.05.21:

վուրդը դիմավորեց և՛ ուրախությամբ, և՛ վախով: Դրականն այն էր, որ ցարական իշխանության տապալումով հայերի համար ևս բացվում էին քաղաքական ազատության լայն հորիզոններ, գործունեության լայն ասպարեզ: Իսկ վախը կապված էր Կովկասյան ռազմաճակատի քայքայման հետ, որից կօգտվեին թուրքերը, և հայերի բոլոր հույսերն ու ծրագրերը հօդս կցնդեին [6]:

1917 թ. սկզբին հայ գործիչները քննարկում էին Արևմտյան Հայաստանի ինքնավարության կամ Ռուսաստանին միացման նպատակահարմարությունը, ռազմաճակատի պահպանման, հաղթական պատերազմի շարունակման, Արևմտյան Հայաստանում քաղաքացիական իշխանության ստեղծման, ինքնապաշտպանության և այլ խնդիրներ [7]: Պետք է նշել, որ կար ընդհանուր ոգևորություն և լուսավոր ապագայի հույս:

1917 թ. մարտի 23-ին ժամանակավոր կառավարությանն ուղարկած նամակում՝ հայությանը հետաքրքրող մի շարք հարցերի շարքում, կաթողիկոս Գևորգ Ե-ն կրկին բարձրացնում է Հայաստանի ինքնավարության հարցը. «Այժմեան, անօրինակ պատերազմի ժամանակ, որ մղուում է յանուն մանր ազգութիւնների իրաւանց և արդարութեան սկզբունքի և որի շնորհիւ Տաճկական Հայաստանում գտնուած հայութիւնը անօրինակ զոհեր է տուել, նոցա ապագայի և հայկական վիլայէթների խնդիրը պէտք է, վերջապէս, իւր արդարացի, պատմական լուծումը գտնէ, տալով նոցա կատարեալ ազատագրութիւն և ինքնուրոյնութիւն: Ես մեծայոյս եմ, որ վերանորոգուած Ռուսաստանը, քաջարի Դաշնակիցների համաձայնութեամբ, կստեղծէ Տաճկական նախկին վիլայէթների վրայ ազատ Հայաստան» [8]: Վեհափառը հայկական հարցի արդարացի լուծում էր համարում ազատ Հայաստանի ստեղծումը:

1917 թ. ապրիլի 11-ին կաթողիկոսին ուղարկած նամակում Հայ ազգային պատվիրակության նախագահ Պողոս Նուբարը տեղեկացնում էր, որ բավական հուսադրված էր Ռուսաստանում ցարիզմի տապալումով և ժամանակավոր կառավարության հաստատումով, որի վերաբերմունքը արևմտահայերի հանդեպ դրական էր: Նա հույս էր հայտնում, որ այժմ հայկական հարցի լուծման ընթացքը կփոխվի և ռուսական բանակի գրաված հայկական նահանգներին կտրվի այնպիսի վարչաձև, որը կբավարարի հայության ազգային ձգտումները: Նա Կաթողիկոսին հիշեցնում էր, որ ժամանակավոր կառավարության ԱԳ նախարար Պավել Միլյուկովը իր նախկին ելույթներում և հրապարակումներում բազմիցս անդրադարձել էր Հայաստանին ինքնավարություն շնորհելու անհրաժեշտությանը: Պ. Միլյուկովը Պ. Նուբարին աջակցել էր նաև նախապատերազմյան շրջանում՝ հայկական բարենորոգումների առնչությամբ: Նամակագիրը տեղեկացնում էր, որ նախորդ տարի Փարիզում Ֆրանս-հայկական կոմիտեի կողմից ռուսական Դումայի պատվիրակության ընդունելության ժամանակ Պ. Միլյուկովը Անատոլ Ֆրանսի հարցին պատասխանել է, որ ներկա պատերազմի գլխավոր նպատակներից են նահատակ ազգերին աջակցելը՝ առաջնահերթ նկատի ունենալով Լեհաստանին և Հայաստանին ինքնավարություն տալը: Պ. Նուբարը հույս էր հայտնում, որ Հայաստանի հարցում նա կպահի իր խոսքը, քանի որ պաշտոնի անցնելուց անմիջապես հետո կատարել էր Լեհաստանի վերաբերյալ տրված խոստումը: Հուսադրող էր նաև նախարար դառնալու առթիվ Պ. Նուբարի ուղարկած շնորհավորական հեռագրին Պ. Միլյուկովի պատասխանը. «Հայաստանի համար կանեմ այն ամենը՝ ինչ կարող եմ»: Ազգային պատվիրակության նախագահը Կաթողիկոսին հուսադրում էր, որ այդ տեսակետին են նաև ռուսական կառավարության մյուս անդամները, քանի որ կառավարության ազդեցիկ անդամներից Ալեքսանդր Կերենսկին հարցազրույցում հայտարարել էր, որ Հայաստանին տրվելու է ինքնավարություն [9]:

Արտաքնապես հայանպաստ հայտարարություններով հանդես եկավ նաև ֆրանսիական կողմը: Մայիսի 22-ին Ֆրանսիայի Ազգային ժողովում վարչապետ Ալեքսանդր Ռիբոն հայտարարեց, որ իր երկիրը հրաժարվում է գաղութացման քաղաքականությունից [10]:

Արևմտյան Հայաստանի խնդրին էր նվիրված Հայոց ազգային բյուրոյի՝ 1917 թ.

մարտի 26-ի նիստը: Ընդունվեց որոշում՝ հատուկ առաքելությամբ ԱՄՆ ուղարկել արևմտահայ հայտնի գործիչ և օսմանյան պառլամենտի նախկին անդամ Գարեգին Փաստրմաճյանին (Արմեն Գարո)՝ «ամերիկյան թե կառավարական, և թե հասարակական շրջաններում Հայկական դատը կազմակերպելու համար» [11]:

Ամերիկա պատվիրակություն ուղարկելը պատճառաբանվում էր համաշխարհային մեծ պատերազմում Ամերիկայի հանդես գալով: ԱՄՆ նախագահ Վուդրո Վիլսոնը հանդես էր գալիս ճնշված ազգերին պաշտպանելու հայտարարությամբ, ինչը ևս մեծ ոգևորություն էր առաջացրել հայության շրջանում:

Գ. Փաստրմաճյանը, ում կաթողիկոսը ԱՄՆ-ում ներկայացուցիչ էր նշանակել, մինչև Նահանգներ մեկնելը՝ մայիսի վերջին, Պետերբուրգում հանդիպումներ ունեցավ ռուսական բարձրաստիճան պաշտոնյաների, այդ թվում՝ ԱԳ նախարար Միխայիլ Տերեշչենկոյի ու նրա օգնական Պետրախի հետ: Այդ հանդիպումներից նա հետևյալ եզրահանգմանն էր եկել. «Ներկայ Ռուսական կառավարութեան կարծիքով Հայկական հարցի նպատակայարմար եւ հնարաւոր լուծումը հետեւեալն է՝ «Բուն Հայաստանը (6 վիլայէթները) եւ Կիլիկիան միասին կազմելու են մի աւտոնոմ քաղաքական միութիւն, որը կը դրուի բոլոր պետութեանց համաձայնութեամբ ռուսական պաշտպանութեան տակ»: Հայկական հարցի այս ձեւի լուծումը հնարաւորութիւն պիտի տայ Ռուսաստանին տնտեսական անմիջական կապ ստեղծել Միջերկրականին հետ որով Պոլսոյ եւ նեղուցներու հարցը կը կորցնէ իւր հրամայողական նշանակութիւնը: Արտաքին գործոց նախարարութեան կարծիքով, միայն Ամերիկայի Միացեալ Նահանգներն են որ պիտի կարողանան չեզոքացնել ֆրանսական ծրագիրները Կիլիկիայի նկատմամբ» [12]:

1917 թ. ապրիլի 26-ին հրապարակվեց Թուրքահայաստանի կառավարման մասին ժամանակավոր կառավարության ապրիլի 25-ի որոշումը: Հրամանը ստորագրել էին ժամանակավոր կառավարության վարչապետ Գեորգի Լվովը, արտաքին գործերի նախարար Պ. Միլյուկովը և ժամանակավոր կառավարության գործերի կառավարիչ Վլադիմիր Նաբոկովը: Ըստ դրա՝ Թուրքահայաստանի և պատերազմի իրավունքով գրավված այլ մարզերի տարածքային քաղաքացիական կառավարումը վերցվում էր կովկասյան իշխանությունների, ինչպես նաև Կովկասյան ռազմաճակատի հրամանատարության իրավասությունից և անմիջականորեն դրվում ժամանակավոր կառավարության տնօրինության տակ: Գյուղական և քաղաքային բնակչությունն օգտվելու էր ներքին ինքնավարության իրավունքներից [13]:

Այսպես՝ փետրվարյան հեղափոխության արդյունքում արևմտահայ գաղթականները վերադարձան Արևմտյան Հայաստան, ինչը արգելված էր ցարական իշխանությունների կողմից: Ժամանակավոր կառավարության քաղաքականությունը հնարավորություն էր տալիս արևմտահայերին ամրապնդվելու հայրենիքում և նույնիսկ պատերազմից հետո հասնելու ինքնավարության:

Փարիզի «Վերածնունդ» պարբերականի 1917 թ. հուլիսի 14-ի համարում Արշակ Չոպանյանը գրում էր. «Մենք Հայերս ուրիշ կերպ չենք կրնար ընել եթէ ոչ անփոփոխ պահել մեր ազգային ծրագիրը, վեց նահանգներու և Կիլիկիոյ՝ գէթ Կիլիկիոյ մէկ մասին՝ միացումով ազատ Հայաստանի մը կազմութիւնը ուզել՝ Դաշնակիցներուն հովանւոյն տակ» [14]: Միաժամանակ նա հիշեցնում էր, որ ամենահայանպաստ հայտարարությունն արվել է Ռուս գյուղացիության համագումարում, ուր բարձրաձայնվել էր Հայաստանին լիակատար անկախություն տալու գաղափարը [15]: Հասկանալով, որ միասնական կամ անկախ Հայաստանի վերաբերյալ մեր ձգտումները կարող են իրականություն չդառնալ տերությունների տարբեր շահերի պատճառով, հոդվածագիրը նշում է նաև այն հնարավորությունը, որ կարող են ստեղծվել երեք Հայաստան՝ ներքին ինքնավարություն՝ Արևելյան Հայաստանում, կիսանկախ Արևմտյան Հայաստան՝ Ռուսաստանի, ինքնավար Կիլիկիա՝ Ֆրանսիայի հովանու ներքո [16]:

Ա. Չոպանյանը համոզված էր, որ հայերի համար լավագույն լուծումը ռուսական, թուրքական և պարսկական տիրապետության տակ գտնվող բոլոր հայկական տա-

րածքների միավորումն է անկախ Հայաստանի մեջ: Սակայն հասկանում էր, որ այդ գաղափարն իրականություն դարձնել դեռևս անհնար էր: Հետևաբար նա կարծում էր, որ տվյալ պատմական պահին Արևմտյան Հայաստանի ու Կիլիկիայի հենքի վրա հայերը պետք է հնարավորության դեպքում ձգտեին անկախ պետության ստեղծման, իսկ Արևելյան Հայաստանը ներքին ինքնավարություն պետք է ստանար Ռուսաստանի կազմում: Հետագայում անկախ Հայաստանը կկարողանար իր շուրջը համախմբել մնացած հայկական տարածքները [17]:

Այսպիսով՝ հայ գործիչները, օգտվելով միջազգային բարենպաստ թվացող նոր իրավիճակից, փորձում էին վերջնական լուծման հասնել Հայկական հարցում: Ոմանք նույնիսկ սկսեցին բարձրաձայնել անկախ հայկական պետության ստեղծման անհրաժեշտության մասին: Մինչ այդ, եթե չհաշվենք հատուկենտ անհատների առաջարկները, բարձրացվել էր միայն ինքնավարության հարցը, իսկ անկախությունը մինչև 1917 թ. թվում էր անիրականանալի երազանք: Անկախության գաղափարը հայության լայն շրջաններում դեռևս հասունացած չէր, և հետագա արագ զարգացող իրադարձությունների պայմաններում հայ գործիչները չկարողացան ժամանակին ճիշտ քայլեր ձեռնարկել անկախ պետականությունը վերականգնելու ուղղությամբ:

Նկատելի է դառնում, որ հայ քաղաքական ուժերը տվյալ ժամանակաշրջանում առավել վստահորեն էին առաջ մղում Հայաստանի ինքնավարության և պետականության վերականգնման տեսլականը: Սակայն ուսումնասիրելով այդ փուլում հայ քաղաքական կուսակցությունների գաղափարները՝ գալիս ենք եզրակացության, որ վերջիններս առավել հաճախ խոսում էին Արևելյան Հայաստանի քաղաքական տարածքային ինքնավարության մասին, իսկ Հայկական հարցը համարում էին միջազգային հարց, որը կարող էր լուծում ստանալ միջազգային վեհաժողովում:

1917 թ. հոկտեմբերի 20-ին Ռուսաստանի ժամանակավոր խորհրդի նիստում Ա. Ձիվելեգյանը ներկայացրեց հայության ձգտումները՝ Արևմտյան Հայաստանի վեց նահանգների ու Կիլիկիայի միավորմամբ անկախ պետություն ստեղծել, որը Շվեյցարիայի նման հավիտենական չեզոքություն պետք է ունենար: Նրա կարծիքով, պատերազմից հետո նորանկախ երկիրը տնտեսությունը վերականգնելու և թշնամիներից պաշտպանվելու կարիք կունենար, հետևաբար առաջարկում էր որոշ ժամանակով Հայաստանի մանդատը հանձնել Ռուսաստանին [18]:

Ինչպես տեսնում ենք, անկախության մասին հետզհետե ավելի վստահ են բարձրաձայնում հայ գործիչները: Ճիշտ է՝ Ա. Ձիվելեգյանը ռուսական մանդատ էր նախատեսում անկախ Հայաստանի համար, սակայն դա միայն ժամանակավոր էր լինելու: Հայ գործիչը ձգտում էր տեսնել լիարժեք անկախ ու չեզոք հայկական պետականություն՝ Արևմտյան Հայաստանի ու Կիլիկիայի միավորմամբ:

Հայկական հարցի լուծումը Հոկտեմբերյան հեղաշրջումից հետո մտավ առավել դժվարին փուլ: 1917 թ հոկտեմբերի 25-ին (նոյեմբերի 7) Պետրոգրադում բոլշևիկների կողմից տեղի ունեցավ պետական հեղաշրջում, տապալվեց ժամանակավոր կառավարությունը, և իշխանությունն անցավ բոլշևիկյան կուսակցությանը:

Եթե հայ ժողովուրդը փետրվարյան հեղափոխությունից հետո լիահույս էր, որ Արևմտյան Հայաստանի ինքնավարությունը կամ անկախացումը անդառնալի փաստ է, ապա բոլշևիկյան հեղաշրջումը խոր հիասթափություն առաջացրեց և բացասական արձագանք գտավ: Ինչպես բնորոշում էր Ս. Վրացյանը. «Հայերի համար հոկտեմբերյան հեղաշրջումն անընդունելի էր՝ ամենից առաջ, բոլշևիկների՝ դեպի պատերազմն ու ճակատի պաշտպանության գործը բռնած դիրքի պատճառով» [19]: Հայ գործիչներին արդարացիորեն մտահոգում էին բոլշևիկների հակապատերազմական կարգախոսները և բանակը հետ քաշելու մտայնությունը:

Անկախության գաղափարի հասունացման և նույնիսկ գործադրման համար շուտով ավելի լուրջ կռվաններ ու հնարավորություններ են առաջ գալիս:

Հոկտեմբերյան հեղափոխությունից հետո Ռուսաստանի խորհրդային իշխանութ-

յունը 1917 թ. նոյեմբերի 2-ին հրապարակեց «Ռուսաստանի ժողովուրդների իրավունքների մասին» հռչակագիրը [20]: Այն ռուսական տիրապետության տակ ապրող ազգերին ազատ ինքնորոշման, ընդհուպ անջատման և ինքնուրույն պետություն կազմավորելու իրավունք էր տալիս:

1917 թ. դեկտեմբերի 29-ին Ռուսաստանի ժողկոմխորհի ընդունած «Թուրքահայաստանի մասին» դեկրետով արևմտահայերին իրավունք էր տրվում որոշել սեփական ապագան՝ նույնիսկ անկախանալ: Դեկրետն իրագործելու համար Ռուսաստանի ժողկոմխորհուրդը անհրաժեշտ էր համարում 1. Զորքերի դուրս բերումը «Թուրքահայաստանից» և դրա փոխարեն հայկական ժողովրդական միլիցիայի ստեղծումը՝ տեղի ազգաբնակչության անձնական և գույքային անվտանգության ապահովման համար: 2. Ժողկոմխորհուրդը պահանջում էր, որպեսզի հնարավորություն ստեղծվի գաղթական ու վտարանդի հայերին վերադառնալ Արևմտյան Հայաստան: 3. Դեկրետով նախատեսվում էր «Թուրքահայաստանում» ժամանակավոր ժողովրդական կառավարության ստեղծումը՝ դեմոկրատական հիմունքներով ընտրված հայ ժողովրդի պատգամավորների խորհրդի ձևով: Դեկրետի իրագործումը հանձնարարվեց կովկասյան գործերի արտակարգ կոմիսար Ստեփան Շահումյանին [21]:

Այսպիսով՝ ռուսական նոր իշխանությունները պաշտոնապես հրաժարվում էին Հայաստանից և ճանաչում էին վերջինիս անկախանալու իրավունքը: Այդ քայլով Ռուսաստանը հանդիսացավ առաջին պետությունը, ով ճանաչեց անկախ հայկական պետականության կազմավորման իրավունքը:

Իրադարձությունները զարգանում էին բավական արագ և անսպասելի: Մի կողմից Հայաստանի առջև բացվում էր դարերով սպասված անկախության, մյուս կողմից՝ ռուսական զորքերի հեռացման հետևանքով թուրքերի դեմ միայնակ մնալու հեռանկարը, քանի որ հոկտեմբերյան հեղափոխությունից հետո ռուսական բանակները սկսեցին հեռանալ թուրքական ճակատից:

1917 թ. նոյեմբերի 9-ին Պետրոգրադի հայկական զինվորական կոմիսարիատի խորհուրդը կազմավորեց պատվիրակություն (անդամներ՝ գեներալ Լ. Տիգրանյան, փոխգնդապետ Ն. Մելիք-Փարսադանյան, Հ. Զավրյան), որը հաջորդ երկու օրերին հանդիպումներ ունեցավ ֆրանսիական դեսպան Ժոզեֆ Նուլանսի, Պետրոգրադում ֆրանսիական, բրիտանական, ամերիկյան զինվորական առաքելությունների ղեկավարներ, գեներալներ Անրի Նիսսելի, Ալֆրեդ Նոքսի, Վիլյամ Ջյուջսոնի հետ [22]:

Պատվիրակության խնդիրն էր ստեղծված նոր իրադրության մեջ պարզել Հայաստանի և հայության ապագայի հարցը, դաշնակիցների նյութական ու ռազմական աջակցության հնարավորությունը:

Ֆրանսիական դեսպան Ժ. Նուլանսը նշեց, որ հայերը Ռուսաստանի վրա հույս դնել չեն կարող և պետք է հենվեն սեփական ուժերի վրա: Վստահեցրեց, որ Ֆրանսիան պաշտպանում է անկախ Հայաստան ստեղծելու գաղափարը և պատրաստ է բարոյական ու նյութական օգնություն տրամադրել, եթե կազմավորվի հայերի վստահությունը վայելող և կառավարության պարտականություններ իրականացնող մարմին, որի հետ հնարավոր կլինի բանակցել [23]:

Բրիտանական ներկայացուցիչ Ա. Նոքսը նշեց, որ իր կառավարությունը դեռ որոշում չի կայացրել, իրենք չեն կարող հենց այնպես հսկայական զումարներ և ռազմամթերք տրամադրել, նախ անհրաժեշտ էր համարում որևէ լավ կազմակերպված գործ տեսնել [24]:

Գեներալ Վ. Ջյուջսոնը պատասխանեց, որ պետք է սպասեն մինչև ռուսական կառավարության հարցը լուծվի, քանի որ հայերը միայնակ թուրքերին դիմագրավել չէին կարող, իսկ դաշնակիցները ճանապարհների բացակայության պատճառով չէին կարող օգնություն տրամադրել [25]:

Փաստորեն Ֆրանսիան պաշտպանում էր անկախ Հայաստանի գաղափարը և պատրաստակամ էր օժանդակելու, եթե հայկական կառավարություն ձևավորվեր:

Բրիտանական կողմը նույնպես ցանկանում էր կազմավորված կառավարություն տեսնել, որի հետ կկարողանային բանակցել և համագործակցել:

Բրիտանիայի համար Կովկասյան ճակատի փլուզումը լուրջ սպառնալիք էր, քանի որ թուրքերը պանթուրքիզմի ու պանիսլամիզմի դրոշի ներքո կարող էին համախմբել Կովկասի, Իրանի ու Միջին Ասիայի ժողովուրդներին, և նրանց օգնությամբ թուրքգերմանական բանակները կներխուժեին Հնդկաստան: Բրիտանական կառավարությունը խիստ անհանգստացած էր այդ իրավիճակից և ելքեր էր որոնում [26]:

Սակայն արևելահայ քաղաքական միտքը դեռևս պատրաստ չէր անկախության գաղափարին, պատրաստ չէր հայկական կառավարություն կազմավորելու և սեփական ուժերի վրա հենված ազգային խնդիրները լուծելու տեսլականին:

1917 թ. դեկտեմբերի 5-ին Երզնկայում ռուսական և թուրքական գործող բանակների միջև կնքվեց զինադադար: Որից հետո ռուսական զորքերի կողմից Կովկասյան ռազմաճակատի լքումը զանգվածային բնույթ ստացավ: Հեռացածներին փոխարինում էին նոր կազմավորվող հայկական ազգային զորամասերը, որոնք փաստացի միայնակ պետք է պայքարեին թուրքական հարձակման դեմ:

«Մշակը» 1917 թ. դեկտերբերի 17-ին գրում էր. «Ռուսական զորքից և զենքից, որից մենք ակնկալում էինք հաղթանակ, օգնություն և Հայաստանի ազատություն, այսօր մոռացել է իր բոլոր պարտականությունները և լքել է ռազմաճակատը: Այն մնացել է բաց, ամեն րոպե թուրքական զորքերը կարող են ներխուժել և ոտքի տակ առնել Հայաստանը»[27]:

Հայոց ազգային խորհրդի որոշմամբ ձևավորվեց Հայկական կորպուսը՝ գեներալ Թ. Նազարբեկյանի հրամանատարությամբ, որի գլխավոր խնդիրն էր պաշտպանել Արևմտյան Հայաստանը [28]:

Այսպիսով՝ 1917 թ. ռուսական հեղափոխությունների ալիքի վրա բարձրացավ անկախ հայկական պետություն կազմավորելու հեռանկարը: Սակայն 1917 թ. վերջին և 1918 թ. սկզբին հայ քաղաքական միտքը դեռևս պատրաստ չէր ընդունելու անկախության գաղափարը: Դրանով էր պայմանավորված, որ հայ գործիչներն ինքնուրույն գործելու և անկախություն հռչակելու փոխարեն սկսեցին համագործակցության ուղիներ փնտրել վրացիների ու թաթարների հետ: Ինչպես ցույց տվեց պատմությունը, այդ երեք ազգերը, ունենալով ապագայի հետ կապված իրար հակասող ծրագրեր, չկարողացան ստեղծել միասնական պետություն:

«Թուրքահայաստանի մասին» դեկրետի իրագործմանը խանգարեց նաև այն հանգամանքը, որ Խորհրդային Ռուսաստանի համար ստեղծվել էին արտաքին անբարենպաստ պայմաններ: Գերմանիայի նոր հարձակման հետևանքը եղավ 1918 թ. մարտի 3-ին Բրեստ-Լիտովսկի «անպատվաբեր» հաշտության պայմանագրի ստորագրումը, որի արդյունքում Ռուսաստանը հրաժարվեց ոչ միայն Արևմտյան Հայաստանից, այլև Արևելյան Հայաստանի մի մասից (Արդահան, Կարս, Բաթում)՝ հօգուտ կործանման ճանապարհին գտնվող Օսմանյան կայսրությանը:

Այսպիսով՝ հայ ժողովուրդը Առաջին համաշխարհային պատերազմի ամբողջ ընթացքում արդարացի պայքար մղեց Հայկական հարցի լուծման համար: Ինչպես տեսանք, դա Ռուսաստանն օգտագործեց այնքանով, որքանով դրա հաշվին կիրականացներ իր ծրագրերը: Արդյունքում Հայաստանի անկախության պահին (1918 թ. մայիսի 28) Արևմտյան Հայաստանի և Կիլիկիայի ինքնավարության կամ անկախության հարցը կանգնած էր փակուղու առջև: Հայ ժողովրդի՝ հարյուրամյակներ մղած հավաքական պայքարի արդյունքում անկախության գաղափարը իրագործելի դարձավ միայն Արևելյան Հայաստանի մի փոքրիկ հատվածում:

ՇԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Ավետիսյան Հ., Հայկական հարցը 1918 թվականին, Երևան, 1997, էջ 11:
2. Керенский А., Россия на историческом повороте: Мемуары, Москва, 1993, стр. 158.
3. Дживелегов А., Русская революция и Армения, «Армянский вестник», 1917, N 10-11, стр. 3.
4. «Աշխատանք», Երևան, 1917, սեպտեմբերի 6:
5. «Ազատամարտ», Թիֆլիս, 1917, սեպտեմբերի 30:
6. Սասունի Կ., Թրքահայաստանը Ա. Աշխարհամարտի ընթացքին (1914–1918 թթ.), Պէյրութ, 1966, էջ 137-139:
7. Մելիքյան Վ., Փետրվարյան հեղափոխությունը և Հայաստանը (1917 թ. մարտ-հոկտեմբեր), Երևան 1997, էջ 156-157:
8. ՀԱԱ, ֆ. 57, g. 5, գ. 144, թ. 15:
9. " Boghos Nubar's Papers and the Armenian Question 1915-1918. Documents, Edited and translated by Vatche Ghazarian, Waltham, 1996, pp. 431-433.
10. Նույն տեղում, էջ 437:
11. Ավետիսյան Հ., նշվ. աշխ., էջ 12:
12. ՀԱԱ, Ֆ. 57, g. 5, գ. 154, թ. 17-18:
13. Մելիքյան Վ. , նշվ. աշխ. , էջ 147-148:
14. «Վերածնունդ», Փարիզ, 1917, թիւ 1, էջ 14:
15. Նույն տեղում:
16. Նույն տեղում, էջ 15:
17. «Վերածնունդ», Փարիզ, 1917, թիւ 2, էջ 59:
18. РЬчь А. К. Дживелегова въ совЬтЬ республики 20-го октября 1917 г., "Армянскій ВЬестникъ", 1917, N 43-44, стр. 4.
19. Վրացյան Ս., Հայաստանի Հանրապետություն, Երևան, 1996, էջ 56:
20. Հայաստանը միջազգային դիվանագիտության և սովետական արտաքին քաղաքականության փաստաթղթերում, խմբագիր Զ. Կիրակոսյան, Երևան, 1972, էջ 410-412:
21. Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ ռևոլյուցիան և սովետական իշխանության հաղթանակը Հայաստանում: Փաստաթղթերի և նյութերի ժողովածու, Երևան, 1960, էջ 156-157: Նաև՝ Հայաստանը միջազգային դիվանագիտության … փաստաթղթերում, էջ 418-419:
22. Ավետիսյան Հ., նշվ. աշխ., էջ 39:
23. Նույն տեղում:
24. Նույն տեղում, էջ 39-40:
25. Նույն տեղում, էջ 40:
26. Sandeep Chawla, Middle East or South Russia: Contradictions in British Imperial Strategy, 1917-1919, Proceedings of the Indian History Congress, Vol. 37 (1976), pp. 491-492.
27. «Մշակ», Թիֆլիս, 1917, դեկտեմբերի 17:
28. Պետրոսյան Գ., Անդրկովկասի ներքին և արտաքին քաղաքական իրավիճակը (1917 թ. հոկտեմբեր - 1918 թ. փետրվար), Բանբեր Երևանի համալսարանի, № 2, Երևան, 2016, էջ 6-7:

ԱՄՓՈՓԱԳԻՐ
1917 թվականի ռուսական հեղափոխությունները և Հայկական հարցը
Սամվել Պողոսյան, Հասմիկ Ղռմաջյան

1917 թ. ռուսական հեղափոխություններին զուգահեռ բարձրացավ անկախ հայկական պետություն կազմավորելու հեռանկարը: Հայ գործիչները, օգտվելով միջազգային բարենպաստ թվացող նոր իրավիճակից, փորձում էին վերջնական լուծման հասնել Հայկական հարցում: Ոմանք նույնիսկ սկսեցին բարձրաձայնել անկախ հայկական պետության ստեղծման անհրաժեշտության մասին: Մինչ այդ բարձրացվել էր միայն ինքնավարության հարցը, իսկ անկախությունը մինչև 1917 թ. թվում էր անիրականանալի երազանք: Սակայն անկախության գաղափարը հայության լայն շրջաններում դեռևս հասունացած չէր: Հետագա արագ զարգացող իրադարձությունների պայմաններում հայ գործիչները չկարողացան ժամանակին ճիշտ քայլեր ձեռնարկել անկախ պետականությունը վերականգնելու ուղղությամբ: Դրանով էր պայմանավորված, որ հայ գործիչներն ինքնուրույն գործելու և անկախություն հռչակելու փոխարեն սկսեցին համագործակցության ուղիներ փնտրել վրացիների ու թաթարների հետ: Ինչպես ցույց տվեց պատմությունը, այդ երեք ազգերը, ունենալով ապագայի հետ կապված իրար հակասող ծրագրեր, չկարողացան ստեղծել միասնական պետություն:

РЕЗЮМЕ
Русские революции 1917 года и Армянский вопрос
Самвел Погосян, Асмик Крмаджян

Ключевые слова: Армянский вопрос, Февральская революция, Октябрьская революция, независимость Армении.

Перспектива создания независимого армянского государства возникла на волне русских революций 1917 г. Армянские политики, пользуясь, казалось бы, благоприятной международной ситуацией, пытались прийти к окончательному решению Армянского вопроса. Некоторые даже заговорили о необходимости создания независимого армянского государства. До 1917 года поднимался только вопрос автономии, а независимость казалось несбыточной мечтой. Однако идея независимости еще не созрела в более широком кругу армян. В условиях дальнейших стремительно развивающихся событий армянские политики не смогли вовремя предпринять правильные шаги для восстановления независимой государственности. Это было связано с тем, что вместо того, чтобы действовать самостоятельно, провозгласив независимость, армянские политики стали искать пути сотрудничества с грузинами и татарами. Как показала история, эти три народа, имея противоречивые планы на будущее, не смогли создать единое государство.

SUMMARY
The Russian Revolutions of 1917 and the Armenian Question
Samvel Poghosyan, Hasmik Ghrmajyan

Keywords: Armenian Question, February Revolution, October Revolution, Independence of Armenia.

The prospect of forming an independent Armenian state arose on the wave of the Russian revolutions of 1917. Armenian politicians, taking advantage of the seemingly favorable international situation, were trying to reach a final solution to the Armenian Question. Some even

began to speak out about the need to create an independent Armenian state. The issue of autonomy was raised only in 1917 and the independence seemed like an unrealistic dream before. However, the idea of independence had not yet matured in the wider circle of Armenians. In the conditions of further rapidly developing events, the Armenian politicians could not take the right steps in time to restore the independent statehood. It was conditioned by the fact that instead of acting independently and declaring independence, Armenian politicians began to look for ways of cooperation with Georgians and Tatars. As history has shown, these three nations, having conflicting plans for the future, could not create a united state.